ԿԱՐԾԻՔ
ՎԱՀԱԳՆ ԱՎԵՏԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ՝ «ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ 1902-1921 ԹԹ. ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ Թ.00.05 «ԿՐՈՆԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության՝ XX դ. սկզբի պատմության ուսումնասիրությունն ընդհանրապես և նրա գործունեության քննարկումը տվյալ ժամանակաշրջանի ազգային-քաղաքական գործընթացներում մասնավորապես կարևոր և արդիական է: Խնդիրը նախ և առաջ այն է, որ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության շրջափուլում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը ևս հայտնվեց ծանրագույն իրավիճակում՝ դեգերելով ու փորձելով մնայուն նստավայր գտնել: Մյուս կողմից, ստեղծված դժվարին պայմաններում այն փորձում էր կատարել իր առաքելությունը հայ իրականության մեջ:

Չնայած նշված՝ հույժ կարևոր իրողություններին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության խնդրո առարկա շրջանի պատմությունն առանձին ու համապարփակ ուսումնասիրության առարկա չի դարձել: Այս առումով գովելի է թեմայի ուսումնասիրության նախաձեռնությունը:

Վահագն Հարությունյանի՝ «Կիլիկիո Հայոց Կաթողիկոսությունը 1902-1921 թթ. ազգային-քաղաքական գործընթացների համատեքստում» վերնագրով ատենախոսությունը նպատակ ունի լրացնելու վերևում նշված բացը՝ գիտական և ընթերցող հանրությանը ներկայացնելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատմության այդ հանգուցային շրջափուլի դերակատարությունը՝ այն դիտարկելով ազգային-քաղաքական գործընթացների հետ փոխկապակված:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու 10 հավելվածից:

Ներածության մեջ հեղինակը հստակորեն ներկայացնում է թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հիմնավորում

ժամանակագրական շրջանակը, լուսաբանում վերլուծության մեթոդաբանությունը և ատենախոսության գործնական-կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Պայքար Սսի կաթողիկոսության համար: Սահակ Բ (Եղեգցի) Խապայանի աթոռակալման առաջի շրջանը (1902-1914 թթ.)» հեղինակը «Կիլիկիո կաթողիկոսությունը և իր թեմերը XX դարասկզբին» թեմայի շրջանակներում ներկայացրել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատմության համառոտ ակնարկը, Կաթողիկոսության թեմական բաժանումները, Սսի սրբավայրերը, կիլիկիահայերի ազգային-եկեղեցական տոները:

«Պայքար Սսի Կաթողիկոսական աթոռի համար (1894-1902 թթ.)» թեմայի շրջանակներում հեղինակն անդրադարձ է կատարել կաթողիկոսական աթոռին հավակնող Գրիգոր եպիսկոպոս Ալեաթճյանի և Հովհաննես եպիսկոպոս Գազանճյանի թեկնածությունները, «Սահակ Բ Խապայանի՝ որպես Սսի նոր կաթողիկոսի ընտրությունը և օծումը» թեմայի շրջանակներում վեր հանել կաթողիկոսական աթոռին Գևորգ եպիսկոպոս Երեցյանի թեկնածությունը, Սահակ արքեպիսկոպոս Խապայանի առաջադրումն ու ընտրությունը, դրա նշանակությունն ու արձագանքները:

«Սահակ Բ Խապայան կաթողիկոսի գահակալության սկզբնական շրջանը (1902-1909 թթ.)» թեմայի շրջանակներում հեղինակը հաջողությամբ ներկայացրել է Սսի մայրավանքում տիրող իրավիճակը, միաբանությունը, եկեղեցական կյանքը, հոգևորականների պատրաստման խնդիրը, սովյալ զեյթունցիների համար օգնության կազմակերպումը, հարաբերությունները Ամենայն Հայոց կաթողիկոսության և Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունների հետ, սահմանադիր ժողովների վերակազմումը և այլ հարցեր:

«Մահմեդական անհանդուրժողականության և բռնությունների դրսևորումները 1909 թ. կոտորածների շրջանում՝ Կիլիկիո կաթողիկոսության գործունեության համատեքստում» թեմայի շրջանակներում Վ. Հարությունյանը վեր է հանել Կիլիկիո կաթողիկոսության գոյավիճակը Ադանայի կոտորածների շրջանում և նույն շրջանում Սիսում տիրող իրադրությունը:

«Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր-եկեղեցական կյանքը 1909-1914 թթ.» թեմայի շրջնականերում հեղինակը լուսաբանել է հայ հոգևորականների ճակատագիրը 1909 թ. կոտորածներից հետո, անօթևանների և որբերի նկատմամբ խնամքը, տարագրությունը և

դավանափոխությունը, եկեղեցական ու հոգևոր կյանքի աշխուժացումը, Թլանի ազարակի կարգավիճակի խնդիրը և դրա լուծումը, Սսի կաթողիկոսության և թուրքական իշխանությունների հետ հարաբերությունները:

Երկրորդ գլխում՝ «Կիլիկիո կաթողիկոսությունը Մեծ Եղեռնի տարիներին և կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը Երուսաղեմ» հեղինակն անդրադարձել է 1914-1915 թթ. կիլիկիահայության նկատմամբ իրականացված բռնաճնշումներին և տարագրությանը, 1916 թ. հուլիսի 19-ի՝ օսմանյան կառավարության՝ «Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան» կանոնագրի նախագծի վերլուծությանը, Երուսաղեմում Սահակ Բ. Խապայանի պաշտոնավարման շրջանին: Հատկապես արժեքավոր են զորահավաքին և դասալքությանը կաթողիկոսության վերաբերմունքի, կիլիկիահայության տարագրության կաթողիկոսության դիմակայության, հոգևորականության աքսորի հարցերի ուսումնասիրությունը: Կարևոր հետևություններ են կատարված նաև կիլիկիահայության ինքնապաշտպանությանը կաթողիկոսի դիրքորոշման հարցում:

Երրորդ գլխում «Կիլիկիո կաթողիկոսական աթոռի դեգերումները 1917-1921 թթ.» հեղինակի քննության նյութ են դարձել Կիլիկիո կաթողիկոսության տեղափոխությունը Երուսաղեմից Դամասկոս և Հալեպ, հայ բնակչության վերադարձի կազմակերպումը Կիլիկիա, եկեղեցու դերը հայության ազգային վերաշինության գործընթացում, Սահակ Բ կաթողիկոսի ուղևորությունն Արևմտյան Եվրոպա: Հեղինակը կարևոր ուսումնասիրություններ է կատարել Դամասկոս և Հալեպ կաթողիկոսության տեղափոխության, գաղթականների օգնության, պատրիարքությունների և Կիլիկիո կաթողիկոսության վերահաստատման հարցերի քննության ընթացքում:

Ատենախոսության եզրակացությունները բխում են հեղինակային վերլուծությունից, հիմնավորված են և ընդունելի:

Ատենախոսության աղբյուրային հենքը լիովին բավարար է արդյունավետ և բովանդակային վերլուծություն կատարելու համար:

Հեղինակն ըստ անհրաժեշտության անդրադարձել է նաև տարբեր հետազոտողների տեսակետներին, քննարկել դրանք՝ այդ ամենը փաստարկելով բոլոր անհրաժեշտ հղումներով:

Ատենախոսության մեջ հեղինակի կատարած քննությունն ու արտահայտած կարծիքները հնարավորինս հիմնավոր են, օբյեկտիվ: Հեղինակը հանդես է բերել աղբյուրային և վերլուծական գրականության հետ աշխատելու հմտություններ, գիտական աշխատանք կատարելու էական ընդունակություններ, խնդիրներ սահմանելու և դրանք հետևողականորեն լուծելու կարողություններ, որի արդյունքում մասնագիտական խորհրդի դատին է հանձնված կարևոր և արդյունավետ գիտական աշխատություն:

***

Վ. Հարությունյանի ատենախոսության վերաբերյալ իմ լիովին դրական կարծիքին զուգահեռ ներկայացնում եմ նաև մի քանի դիտողությունները:

1. Առաջին դիտողությունը վերաբերվում է վերնագրումներին, ավելի որոշակի՝ դրանցից մի քանիսի ձևակերպումներին: Կան վերնագրեր, որոնք ներկայացված են բարդացված շարադրանքով, թեև կարելի էր դրանք պարզեցնել: Օրինակ՝ «1.5. Մահմեդական անհանդուրժողականությունը և բռնությունների դրսևորումները 1909 թ. կոտորածների շրջանում՝ Կիլիկիո կաթողիկոսության գործունեության համատեքստում», «2.1. Կիլիկիայի հայ բնակչության բռնաճնշումները և տարագրությունը 1914-1915 թթ.՝ Սսի կաթողիկոսության գործունեության լույսի ներքո», «Պայքար Սսի կաթողիկոսության համար: Սահակ Բ (Եղեգցի) Խապայանի աթոռակալման առաջին շրջանը (1902-1914 թթ.)»: Մյուս կողմից, ատենախոսության ենթավերնագրերն ու ենթաթեմաների վերնագրերը երբեմն ձևակերպված են իրադարձության ընթացքի (դինամիկայի) տրամաբանությամբ («1.2.Պայքար Սսի կաթողիկոսության համար», «1.3...կաթողիկոսի ընտրությունը և օծումը», «2.1....բռնաճնշումները և տարագրությունը»), թեև կարելի էր ձևակերպել քննարկվող խիստ կարևոր խնդիրների տրամաբանությամբ:
2. Հեղինակն օգտագործում է «հոգևոր-եկեղեցական կյանք» արտահայտությունը (էջ 73, 84)՝ առանց ներկայացնելու դրա եզրութային

նշանակությունը: Մինչդեռ մասնավորապես «Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր-եկեղեցական կյանքը 1909-1914 թթ.» ձևակերպման մեջ այդ արտահայտության երկու բաղադրիչները կարող են ընկալվել որպես նույնանշանակ բառեր: Ճիշտ կլիներ «հոգևոր և եկեղեցական կյանք» ձևը:

3. Օգտագործված է «Սսի և Էջմիածնի կաթողիկոսություններ» արտահայտությունը (էջ 49), որոնց փոխարեն կարելի էր գրել «Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություններ» տարբերակը:

4. Հղումներում երբեմն առկա են շտկման կարիք ունեցող ձևակերպումներ: Օրինակ՝ էջ 85-ի «Տե՛ս Բարգէն Ա Աթոռակից կաթողկիոս Մեծի Տանն Կիլկիոյ, նշվ. աշխ., էջ 912»-ի փոխարեն կարելի էր կիրառել «Տե՛ս Բարգէն Ա կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 912» ձևը:

5. Առկա են մի քանի տեխնիկական թերություններ: Օրինակ՝ երբեմն «կաթողիկոսություն» բառը գրված է փոքրատառով (էջ 2 և այլն), երբեմն՝ մեծատառով (էջ 2 և այլն): «Եզրակացությունների» փոխարեն պետք էր գրել «Եզրակացություն»: Ներածության մեջ «Հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները» բաժինը պետք էր բաժանել երկու մասի. առաջինը՝ «Հետազոտության նպատակն ու խնդիրները», իսկ երկրորդը՝ «Հետազոտության օբյեկտը և առարկան» վերնագրումներով:

***

Նշված դիտողություններն էականորեն չեն ազդում ատենախոսության արժանիքների վրա: Դրանք ատենախոսին օգտակար կլինեն հետագա ուսումնասիրություններում: Վ. Հարությունյանը կատարել է ուշագրավ աշխատանք, ակնհայտ է հեղինակի խոսքը, վերլուծական միտքը: Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով, հեղինակի հրատարակած հոդվածներն էլ արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

***

«Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 22-րդ կետի չորրորդ պարբերության համաձայն, ուսումնասիրելով

ատենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակված աշխատանքները, ներկայացնում եմ հետևյալը.

1. հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են գլուխների բովանդակությունը,
2. ատենախոսության թեման արդիական է,
3. ատենախոսության մեջ առկա դրույթներն և եզրահանգումները հեղինակային են, իսկ փոխառված մտքերն ու դիտարկումները՝ պարտադիր հղված,
4. ատենախոսության մեջ քննարկված թեմատիկան, ներկայացված դրույթներն ու եզրահանգումները նոր և հիմնավոր են:

Այսպիսով՝ Վահագն Ավետիսի Հարությունյանի «Կիլիկիո Հայոց Կաթողիկոսությունը 1902-1921 թթ. ազգային-քաղաքական գործընթացների համատեքստում» վերտառությամբ Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետին, գնահատվում է իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում:

Ասվածի հիմքով համարում եմ, որ Վահագն Ավետիսի Հարությունյանն արժանի է իր հայցած՝ Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պ.գ.դ. Արման Սամվելի Եղիազարյան

պ.գ.դ. Ա. Ս. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Մ. Վ. Հովհաննիսյան

23.05.2022 թ.